Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան UG-15 մրցույթի վերաբերյալ 2018/09/08 15:36:12 Armeps համակարգով ստացված հարցմանը պարզաբանում ենք հետևյալ կետերը՝

1. Հարց՝ Armeps Համակարգում ո՞ր բաժնում է մուտքագրվում Հայտի նամակը:

   Պատասխան՝ Հայտի նամակը ներբեռնելու համար պետք է մուտք գործել «Չափաբաժիններ» բաժինը, այնուհետև «Ֆինանսական» բաժինը և համապատասխան դաշտում ներբեռնել Հայտի նամակի ֆայլը:

2. Հարց՝ Armeps Համակարգ ֆինանսական ծրարին ո՞ր Ձևաթուղթն է կցվում:

   Պատասխան՝ «Ֆինանսական» բաժնում, նույն ինքը «ֆինանսական ծրար», այլ Ձևաթուղթ բացի Հայտի նամակի լրացված ձևի կցելու անհրաժեշտություն չկա:

3. Հարց՝ Ի՞նչ ապրանքների մատակարարումն է համարվում նմանատիպ:

   Պատասխան՝ Նմանատիպ ապրանքներ են համարվում աղբահանության համար նախատեսված մետաղական կամ պլաստիկ տարաների մատակարումը:

4. Հարց՝ ՑՀ 16.4 ի՞նչ պահեստամասերի մասին է խոսքը, որտե՞ղ է նշված պահեստամասերի ցանկը:

   Պատասխան՝ ՑՀ 16.4 կետում նշված պահեստամասերին վերաբերվում են պլաստիկ աղբարկղերի անիվներին և կափարիչին: Պահեստամասերի առանձին ցանկ մրցութային փաթեթում առկա չէ:

5. Հարց՝ ՑՀ 37.1՝ ի՞նչ է նշանակում ավելացնել կամ պակասեցնել քանակները 15%-ով, այսինքն հայտարարված մրցույթի քանակները վերջնական չե՞ն, և ե՞րբ են հայտարարվելու ստույգ վերջնական քանակները:

   Պատասխան՝ ՑՀ 37.1 կետի իմաստը լիովին պարզաբանված է մրցութային փաթեթի I Բաժինում «Ցուցումներ հայտատուներին»՝ ֆայլի 25-րդ էջում, որում նշված է որ «Պայմանագրի շնորհման ժամանակ Գնորդը իրավունք է վերապահում ավելացնելու կամ կրճատելու VII Բաժնում / Պահանջների ցուցակ/ ի սկզբանէ նշված ապրանքների և դրանց հետ կապված ծառայությունների քանակը», իսկ II Բաժինում «Հայտաթերթ» սահմանված է ապրանքների քանակի «Առավելագույն տոկոսը, որքանով քանակները հնարավոր է ավելացնել» կամ «կրճատել» (տվյալ դեպքում այդ տոկոսը կազմում է 15 տոկոս):

6. Հարց՝ ՑՀ 32.4 գ) - ի՞նչ ժամանակահատված է պահանջվում սպասարկման համար:

   Պատասխան՝ ՑՀ 32.4 գ տվյալ կետը Չի կիրառվում:

7. Հարց՝ ՑՀ 17.2 (b) Վաճառքից հետո ի՞նչ ժամանակահատված է պահանջվում սպասարկման համար:

Պատասխան՝ ՑՀ 17.2 (b «Վաճառքից հետո սպասարկում» Չի պահանջվում:

8. Հարց՝ ՑՀ 16.4 Ապրանքների շահագործման նախատեսված ժամանակահատվածը (պահեստամասերի առումով)՝ 5 տարի, իսկ ՊԸՊ 28.3 Երաշխիքի վավերականության ժամկետներն են՝ 1 տարի: Արդյոք չե՞ն հակասում այս երկու պահանջները իրար:

Պատասխան՝ ՑՀ 16.4 առկա է վրիպակ: «Ապրանքների շահագործման նախատեսված ժամանակահատվածը (պահեստամասերի առումով)» պետք է լինի 1 տարի: